ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան
(կնքման վայրը)

«11» 08 2020թ.

*«08» հունվարի 2018 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման թիվ ԿՊ0031 պայմանագրի (այսուհետ՝ **«Պայմանագիր»**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ **«Մատակարար»**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ.Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ **«Սպառող»**), ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով **«Կողմեր»**, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ **«Կողմ»**, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.*

1. *Պայմանագրի 6-րդ հավելվածի «Այլ պայմաններ (Լրացնում են կողմերը)» մասում ավելացնել 19-րդ կետը հետևյալ խմբագրությամբ.*
   «Պայմանագրի հավելված 6-ին կից ցանկում ընդգրկված ստորաբաժանումներից, եթե որևէ սպառիչի առևտրային հաշվիչը տեղադրված է սահմանազատման կետից դուրս, ապա ԷՄՕԿ-ի 41 կետի համաձայն այդ ստորաբաժանման բաժանորդական քարտում հաշվարկվում է տեխնոլոգիական կորուստ համաձայն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության («Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ) կողմից հաստատված կորուստների չափերի (աղյուսակը կցվում է առդիր 1 էջ)»:
2. *Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է Պայմանագրի գործողության օրվանից, Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:*
3. *Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:*
4. *Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:*

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար՝	***Սպառող՝***
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
Գտնվելու վայրը՝	Գտնվելու վայրը՝
ք. Երևան, Ա. Արմենակյան 127	ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8
Լիազորված անձ՝	Գլխավոր քարտուղար՝
/ Դ. Ղազինյան	Վ. Օհանյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)	(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ. Տ.	Կ. Տ.